

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐԻ»

ՆԱՄԱ ԿԱՐ ՈՒՆԻ ԹՂԹԱՏՈՒԹԻՒՆ

ՊԵՏԵ Կ ՈՒՂՂԻՆ ԵՍԻ

Վարչություն ՆՈՐ ՕՐ Բարձր

ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Չեռագիրներն ետ չեն դարձուր,

ԱՐՏՕՆԱՏԷՐ Փ. ՄԻՆԵՆԻ

# ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՐԵՍԱԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲՍԺԱՆՈՐԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

ՊՐԵ. ՈՂԶ

Գաղթի և արտաքին	50
Վեց ամսայ	30
Շրջակայից	60
Վեց ամսայ	35

ԱՐՏԱՏՄԱՆ ԶԱՄԱՐ

Տարեկան	Յրանց	18
Վեցամսայ		10

ԹՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՂՄԱՍԻ ԶԱՄԱՐ

Տարեկան	Բուրի	7
Վեցամսայ		4

ԲԱՆԱՆՈՐԳՐԱԳՐՈՒ ԿԱՆԻՎԷ

ԵՒ ԹՂԹԱՏՈՒ ԿԱՆԻՎԷ

Թերին վարչություն վրայ է

ՇԱՐԱԹ ԳԵԿՏ. 30/12 ՅՈՒՆ. 1901

ՔԱՆԱՆ ՓԱՐԱՅ ՈՂԶ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 62

## ԿՐԹԱԿԱՆ ՈԳԵԽՈՐՈՒԹԻՒՆ

Կը հարցնեմ:

Ո՛վ կը յուսար ասկից երեք ամիս առաջ՝ թէ Սամուելեան մը պիտի դար Մեխիթոփոլի ավուներէն, և այնքան ետանդով պիտի բարեկարգէր մեր Ազգային վարժարանի անկեալ և յուսահատ վիճակը:

Ո՛վ կը յուսար թէ անկէ քիչ մը վերջն ալ պիտի հասնէր Այվազեան մը (որուն գալուն յոյսերնիս կտրած էինք) Ռոտտոթոյի ավուներէն՝ պիտի այցելէր վարժարանի խարխուլ շէնքը փլչելու մտա, անմիջապէս պիտի վերադառնար Ազգային վարժարանի ժողովարանը ու պիտի գոչէր «Նոր վարժարան մը չինենք»:

Ո՛վ կը յուսար և ո՛վ կը սպասեր որ «Նոր-Օր»ը՝ անցելոյն իր դէմ ցանցած թշնամական որոնները մէկիկ մէկիկ ջնջելով՝ պիտի պարզէր իր յաղթական գրոշակը, և այսօր առիթը պիտի ունենար Այվազեան-Սամուելեան անկեալ հարցին վրայ ճառելու:

Բայց ինչո՞ւ չի յուսանք, կը պատասխանեմ ես: Տոկուն կամք և անաչառ աշխատութիւն ըլլալէն վերջը՝ ինչ բան կրնայ արգելիլ մեզ որ չի յուսանք աշխարհի մէջ:

«Մարդուս կեանքը պատերազմի դաշտ մ'է ուր յոյս և յուսահատութիւն ճակատ առ ճակատ կը կուտին, մերթ մին կը յաղթէ մերթ միւսը, մինչև որ ասոնցմէ մին իր վերջին յաղթանակը տանի. ուրեմն ինչու յուսահատինք»:

Կ'ըսէի ասկից երկու շաբաթ առաջ երբ կը գրէի թէ՛ հայրենասէր Քրուկէր ինչու չէր յուսահատեր իր Պոտոլը:

Այո՛, տարածամ յուսահատութիւնը ակար և վախկոտ սերտերու արտադրութիւնն է, պիտի կրնամ ըսել:

Այն սերտերը որ աշխատելու և դժուարութեանց յաղթելու ձգտում չունին, միշտ շատ կը յուսահատին:

Ասկից երեք ամիս առաջ Ազգային

(\*) Կերենի թէ «Բիզանդիոնի» գահիքէի մէկ յոռտես թղթակիցը երբէք չէր յուսար որ Ազգային վարժարանը կըրար բարեկարգուէր և մոր շէնքի մը կառուցման մասնաձեռնութիւն ըլլուէր:

վարժարանի հոգարարները ըստանձնելու շատեր չէին յանդիման, դպրոցին քայքայուած վիճակը առարկելով, այդ միջոցին հասան Շերիտ-ճեան, քիչ մը վերջը Սամուելեան, ու քիչ յետոյ Այվազեան:

Տեսէք ինչպէս:

Շերիտ-ճեան երբ հոգարարութիւնը ստանձնեց վարժարանին հիւանդ և հիւժեղ վիճակը բժշկելու համար ձեռնհաս բժշկի մը — Տեսուչի — պէտք ունէր որ կը պակէր. ճիշդ այդ միջոցին էր որ հասաւ Միլիթոփոլի հովիւր՝ որ իր միջոցով կըրմէր ողջոյններ և օրհնութիւններ բերած էր Գահրէ, անցաւ գործի գլուխ և յոյս տուաւ յուսահատին:

Վարժարանը վերակենդանացաւ:

Կը մնար վարժարանին շէնքը որ միշտ խարխուլ էր ու փլչելու նիւթակայ: Յակոբ Աշոտ, Իսթիճեան, Մամբրէ, ասոնցմէ և ոչ մին մտածած չէր ասոր վիճակին վրայ:

Եկաւ հասաւ Այվազեան, այցելեց վարժարանը, պտտեցաւ դասարանները, տեսաւ հոն կրթական ողորդութիւն, խնամեալ դաստիարակութիւններ, աշակերտաց կըրմէն ետանդ մը սովորելու, գրելու, կարգալու, շնորհաւորեց Տեսուչիին և հոգարար-ձեռնորդին:

Բայց ուսումնարանական այս առաւելութիւնները չի կրցան ծածկել Սըրբազանին աչքէն՝ վարժարանի շէնքին հիւանդոց առատադէրձը, ակերակ պատերը, վատառոզը դերքը: Այվազեան մեկնեցաւ, ու առաջին անգամ Գուտաուկան ընդհանուր ժողովոյ պաշտօնական գրասենյակին վրայ գրաւ դպրոցին շինութեան խնդիրը: «Վարժարանին ուսումնական մակարդակը բարձրացընելով մէկտեղ, վարժարանի յարմար կեդրոն մը պէտք է ընտրենք որ կառուցուի նոր շէնք մը՝ դպրոցին համար» ըսաւ:

Այս եղաւ Սըրբազանին առաջին խօսքը և գործունէութիւնը իր Առաջնորդութեան առաջին քայլին մէջ:

Ասիկայ ապացոյց մ'է թէ մեր Առաջնորդը պիտի գործէ և թէ՛ ուղղը կրնայ աւելի մեծ բաներ յուսալ իր Առաջնորդէն:

Բայց մենք ալ որ ազգին անդամներն ենք պէտք չէ որ չփրանանք, ու յոյսերնիս բոլորովին Առաջնորդին

վրայ դնենք, որովհետեւ առանց ժողովրդի աջակցութեան բան մը չի կրնար ընել, առաջնորդը ինչպէս որ արդէն իր քարոզին մէջ խօսած էր:

Առաջնորդը վարժարանը թող չիմէ, Սամուելեանն ալ վարժարանը թող բարեկարգէ, մենք տակին « զաւակներս ինչ պիտի սովորի Ազգային վարժարանը որ հոն գրկենք » ըսելուս պէս, գործ յառաջ չիբժար: Որովհետեւ վարժարանը կը բարեկարգուի կը շինուի, ոչ թէ բարեկարգողներուն և շինողներուն համար, հասցաւ ժողովրդին համար:

Նմանապէս «Նոր-Օր» ը եթէ կը յուզէ կենսական խնդիրներ, ու կը ճառէ Այվազեան-Սամուելեան հարցին վրայ, ոչ թէ իրեն, հասցաւ ժողովրդին համար է որ կը գրէ, կը յոգնի, ու կը մտածէ:

Ուրեմն, դուք Ազգին զաւակները, առանց աջակցելու եւ աշխատելու, բան մի յուսար. չոր համակրութիւնը և «ազգասէր եմ» ըսելով մէջտեղ իյնալը ստակ չընեն:

Բայց քանի որ աշխատեցաք մի յուսահատիք:

## ԱԶԳԱՅԻՆ ԳՍԼԱՏԵՍՆ ՎԱՐՉԱՐԱՆԸ

Մէկ կողմէն Ազգայնորդի այգային վարժարանը այնքան սուր կերպարանք կ'առնէ, միւս կողմէն Գահրէի Գալստեան վարժարանը՝ իր Պատ. հոգարար-ձեռնորդը կը խստանայ վարժարանը փայլուն շրջանի մը մէջ դնել:

Նորընտիր Տեսուչ Արթ. Տ. Սամուելեանի՝ վարժարանին ուսմանց ընթացքին մէջ ներմուծած բարեփոխութիւնները՝ փորձառական հմտութեանց վրայ հիմնուած՝ կ'երաշխարեն ամեն կերպով վարժարանի ապագայ յառաջդիմութիւնը:

Սոյն բարեփոխմանց համեմատ, այսուհետեւ ձեռագիրութեան դասեր պիտի աւանդուին շաբաթը վեց ժամ աղջկանց համար՝ որոյ պաշտօնը հասակականաբար պիտի յանձնուի ձեռնհաս ուսուցչի մը:

Մանչիւրու վարժարանն ալ հիւսնութեան դասեր մտցնելու համար բանակցութիւնը կը կատարուին

եռանդով՝ Տեսուչեան և հոգարար-ձեռնորդ Սամուելեան Ազն. կարպետ պէյ Շերիտ-ճեանի միջև:

Արդարեւ չենք կրնար ուրանալ թէ հիւսնութեան դասերը ո՛ր աստիճան կրնան օգտակար ըլլալ աշակերտներուն՝ որոնց իբր մանրամարդի դաս ծառայելէ վաս՝ վարժարանին շրջանաւարտ եղած ասնէ՛ն հետեւին միտակն կը տանին գործնական արուեստ մը ես:

Եթէ յառաջիկային այդ արուեստին երեսնէն ապրելու պէտք ալ չունենան, գոնէ իրենց պարագոյ ժամերուն մէջ ատով զբաղելով, թէ իրենց համար տնական մանր մունր կահ կարասիք կը պատրաստեն, միւս կողմէն ալ մարմնամարդ մը ըրած կըլլան: Եւ գիտէք ո՛ր աստիճան կարեւոր է, նամանաւանդ մտային զբաղում՝ ունեցողներուն համար:

Թուարանութեան հետ մէկտեղ ըսկաւ ին անանդուիլ նաև ստմարու կալութեան և երկրաչափութեան դասեր որոնց համար 84 ժամ նշանակուած է շաբաթը:

Բարոյադասութեան դաս մ'ալ աւելցած է, որ անձնութեան ըստանձնած է անանդու շաբաթը 7 ժամ վարժարանին Տեսուչը նոյն ինքն Տ. Սամուելեան:

Յրաններէն, Հոյերէն, Արարերէն, ձայնագրութիւն, գեղագիտութիւն, զբժարութիւն, նաև կաւանդութիւն ձեռնհաս ուսուցչներու խնամք:

Վարժարանին յարգելի Տեսուչը նախաձեռնութիւնը ունեցաւ նաև կազմելու Ուսուցչական Ժողով մը՝ որ կը գումարուի իւրաքանչիւր շաբաթ, որուն կը մասնակցին վարժարանի բոլոր ուսուցիչները, ուրտեղ կը քննուին զանազան մանկավարժական հարցեր, և որոշումները մեծամասնութեամբ կը տրուին:

Բայց աստի իւրաքանչիւր կիրակի աշակերտներու ծնողները կը հրաւիրուին վարժարան՝ որ Տ. Սամուելեան վարժարանի Տեսուչ՝ իրենց սըղայոց տուած տնական դաստիարակութեան վրայ կ'ունենորէ զիրենք, և կը բացատրէ թէ ինչպէս ծնողք պէտք է կրթին իրենց զաւակները տան մէջ:

Վարժարանին Տեսուչեան ներմու-

ճամ նորանոր մեթոսները՝ ծնողները լուս վրայ այնքան լուս ապաւորութիւն թողած են, որ երկու շաբաթուան ժամանակամիջոցին մէջ քրտանէ աւելի նոր աշակերտ արձանագրուած են վարժարան:

Թող օգտուին ուրիշն առիթէն ծընողները նամանաւանդ տեղացի հայրերն և մայրերը՝ եթէ կը փոփաբին իրօք ազգային լուրջ դաստիարակութեամբ օժտել իրենց զաւակները:

### Ի ԳԻՆ ՍԵՎ ԼՈՒՑԿԻԻ

Ա.

ՍԵՆՏԵՐՈՒՆ

Եղա՞ծ է ձեզ տեսնել երբեք, հանգիստալարիս մէջ կամ բազմամարդ տեղումը, մէկ կամ աւելի մարդիկ, որոնք ձեռքովին չլուսած սիկարէթ մը բռնած, սողին անդին կ'ազդուանեն, կ'ստատանեն, խոզարկու, հեռաքնին նայածքով և ծաղիկ մը վրայ թառուց միջատի մը պէս, վառած սիկարէթի մը վրայ կը խոյանան Հանգիստ մը էք բնա շոգենտուերու կամ ուրիշ սահմանափակ տեղերու մէջ լուսկի ի խնդիր մարդերու, որոնք քանի մը անգամ չլուսած կ'ընեն շոգենտուին յուսահատ, կը դարձնուին անընդհատ ու անհանդարտ, աղոյշական նայածքներ կ'ենտեն վրագ, սիկարէթին նորէն կ'սլլեն, նորէն կ'ընտան, բերանին կ'ընեն, վար կ'առնեն, անոր պաշտօնազուրկ վիճակը մասնանշելով ու գլխովին դմարտով կարծես ի նայատու առանց կրակի իրենց սիկարէթն որ առանց սիրոյ սիրտ մը կ'ընեն քեզ ակամայ 25 հազար որ ուղղորդութիւնի գրաւէ շատ վաղուց մէկը, որ ի զուր իր չորս լուրը ներկայ ու ապագայ սիկարէթը խաղաղկեղէ կտրք, յանկարծ ծանրողին բան մը գտած ըլլալու պէս վաղէ ու գետնէն վերցնէ ծայր-սիկարէթ մը՝ կայծկող, թքոտ ու գեղնած:

Ահա շատ պարզ բան մը՝ որ ահագին խնդիրներ կը բաժանակէ իր մէջ, և շատ պզտիկ երեւոյթ մը՝ աննշան ինքնին՝ որ ստուար նկատողութիւններու տեղի կուտայ Արդէն աւելորդ է դիտել տալ որ էն պզտիկ բաներէն ծնունդ կ'առնեն շատ անգամ ամենամեծ հեռանկարներ Անձրե մը որ պատերազմ մը կորսնցնել կուտայ Փոյնտի մը որ Արմատային վերէն դարերու ընթացքը կը փոխէ: Այսօրուան աննշան մասնիկին մէջն է շատ հեղձալուան վիթխարի եղբայրային ամբողջութիւնը: Նուազ անհունով է որ առաւել անհունը կարելի կ'ըլլայ չափել:

Հայտնեք, եթէ կ'ուզէք, որքան որ կարելի է, մէկ լուսկի մը մուրալուն ներկայ անպատեհութիւնները, ու յառաջիկայ վարձանքները:

Երեւակայեցէք որ ծխող մը ըլլայի ես, և սիկարու պլորէնէ կտրք, անոր հրաւառ մէկ ազդակներն ի խնդիր, վնասուտքն երէնի, առանկ քիչ մը բաղանարդ տեղ մը, ճեմելուայր մը զոր օր՝ նակ:

Կ'նկարկայանամ մէկու մը որ երկա-

թէ բաղկութիւն մը մէջ կ'իստովն ընկողմնած, ստըր ստըրն վրայ նետած և վարեչուրը՝ գէմը փոփոխուն, իր սիկարի ծուխին ժանկաւար սլորանները կ'առեցնէ իր բոլորաթուր արտաշնչութեամբը, մարած նայուածքովը հեշտախ կ'հետեի անոր օգեղէն կապոյտ ծիրերուն, փոքրաղ իր ամբարնակութեան, և մտքովը կ'օրորուի անոր լուսփանցիկ ու առկախ պղպղակներուն յառած:

Գէմը կ'կանգնիմ, սիկարու մասներու մէջ բռնած, իր առաջին զգայութիւնը հմայածափութիւն մը կ'ըլլայ և կէս ցատուով մը կը լեցուի ինձի գէմ: Նստնական անպատեհութիւն: Խորունկ խնայողութեամբ մը, ներողութիւն կ'ընդունիմ, սուսած ձանձրութեան համար, վէտ ի վէտ բարե մը կուտամ ձեռքս երկարելով ու աղայնջող որ հաճի ինձ տալ իր բերնին սիկարու կ'ստորնանամ, և երկարագ Վերջապէս թթուած երեսով մը գլխը փոխելէ, ստըր վար առնելէ, բաղկութիւն վրայ շակուելէ կտրք, կրակն արծարծելու սիկարը հրահրելու համար ուժով մը բռնի կերպով կ'ըջալէ զայն առանց պէտքի ու առանց հաճոյքի, եթէ ոչ քրթմիջնուով Սիկարը բերնէն վար կ'առնէ, ինչ հեռու կը տանի քաղաքավարութեան համար, և ծայրի մուխի կ'ընթակէ իր թէ ինձի յագնութիւն մը խնայած կամ ծառայութիւն մը ըլլած համար: Եւ ես դէմը կանգուն, սիրտս անհամբեր, կը սպասեմ: Ձեռքս ուղ օդին մէջ կ'ըսպասէ: Եւ երբորդ:

Վերջապէս, կ'արեհահաճի ձեռք ինձի կարկառէ, և իր խռոված հանգստին իր փոխադարձութիւն, զսպուած դրոգոհութեան շարժումով մը, ձեռքս մէկդի կ'ընէ, կ'մերժէ, և սիկարին կրակոտ ծայրը, ուղղակի քիթիս կ'երկնցնէ, բռնել ուղեւով կարծես:

— Չէ, պարտես, ձեռքը չեմ տար, որովհետեւ կ'գանիմ: Ի՞նչ գիտնամ ձեռքիդ ինչ ըլլալը, բան մը որ վերջէն բերանս պիտի դնեմ զայն:

Եւ այս մերժումին արժանանալս չզորորդ:

Կ'հանդուրժեմ, կ'ըսիմ, կ'ըսեմ, մէկ, երկու, երեք շունչով կ'մարի, նորէն կ'աշխատիմ: Նոյն պահուն գըրացի սիկարու մարելու պէս բաներ մը կ'ըլլայ և ապահովաբար խնդիր պիտի մեծնայ, եթէ լուսկի կայ մը չգա, երկուքին ալ նուազուն միաւարութիւնը հրահրելու: Փրկուած եմ: Կոզզուիմ: Ենթահակալութեան հաւատարմը կը մատուցանեմ՝ նոր խնայողութիւնով մը ու նոր բարեւոյ մը՝ զոր բռնահարկէ մը ազատած մէկու մը պէս հաղիւքիթին ծայրովը կ'փոխարինէ ան, երթաւ բարով կամ աւելի ճիշդը՝ «գնա բանդ» ըսել ուղեւ պէս: Չնչին բանի մը համար երախտագէտ մնալ, պարտական ըլլալ, և արհամարհոտ «չարժեր» մը արժանանալ, հինգերորդ: Հեռացած աստեղ ուղքիս ծայրովը խելը կ'ընեմ հետեւելու կրակամեծար սիկարատէրիս, և կ'տեսնեմ որ նկարուտած երեւոյթով մը, անգամ մ'ալ քաշելէ կտրք, իր թէ համը, հաղը փախցուցած ըլլամ իր սիկարին, կ'ենտէ զայն, նոր մը վտռելէ կտրք:

Եւ այդ նետելը, միւսնոյն ատեն ինձի նետած մէկ ակնարկին հետ, վերջին անպատեհութիւն:

Այդ պահուն, ինձի պէս լուսկիազուրկ ուրիշ պարտե մը կ'մտենայ և գետնէն կ'վերցնէ ճութ սիկարն և իր սիկարին ծայրը կ'ընթակէ զայն աղտոտ ու թքոտ, Ուրիշ մը նետածը վերցնելու վարնոց դձգութեանէն կտրք, եթէ գարշահոտ արտաւար բերնի մը միքրոսին ալ փոխանցեցիր ինքզինքդ, ա՛ւքեղի նոր անպատեհութիւն մ'ալ: Եւ այդ այսպէս կ'երթայ առանց ծայրի, առանց վերջի:

Գ.

Երեւակայեցէք որ լուսկին, մոմը կ'ընէ մանաւանդ՝ շորհիւ խտրական անմոքելի ճարտարութեամբ և տեղակին լոյսաւոր ոչ-մեծաշնորհին, այնքան տոճան ըլլայ որքան օդին: Երկվեցեակ մը փոխիլը քառասուն փայլի հաշուով և մէկ փոխիլը յիսուն հատ բոլանգակելու պայմանով, խորհեցէք որ մէկ լուսկին մէկ տասնըհինգերորդ փայլ կ'ալ: Ըսել է որ հարկը յիսուն լուսկին տասը փայլ: Եւ մասնակ որ տասը փայլի համար հարկը յիսուն հոգի անհանգիստ կ'ընեն, հարկը յիսուն անգամ կ'իտարհարէ, ներողութիւն կ'ընդգրկէ և հարկը յիսուն անգամ շորհապարտութիւն կ'ըսանք:

Արկայ խնայողութեան աւելի գըձութիւն է: Եթէ խնայողութեան համար կարելի է ուրիշ լուսկին վառել, ինչո՞ւ նոյն պատուակով կարելի չըլլայ ուրիշն տունը ճաշել, կամ ուրիշն մէկ իրեղէնը գործածել: Երբ տասը փայլին համար մարդ յանձնուող կ'ըլլայ հարկը յիսուն անգամ խոնարհելու, աղաչական գիրքեր առնելու, ստորանալու, աւելի մեծագուժար ակնկալութիւններու համար ինչե՞ր չէ կարելի ընել արդեօք:

Եւ խորհի՛ր որ բոլոր այս պլորիկ բաները կ'ազգեն մեր ընտելեանը վերայ, մեր նկարագրին վրայ, մեր ապագայ գործառնութիւններուն վրայ: Մէկ տասնըհինգերորդ փայլի համար խոնարհելով կ'վարժուինք ամէն բանի առջև ձեռքու, կըքու, ամէն նկատում մոռնալու: Հարկը յիսուն անգամ լուսկի համար ուրիշն ձանձրութիւն տալէ վերջը, ա՛լ չենք վարանիր հարկը յիսունըմէկերորդ անգամուն ուրիշ աւելի կարեւոր բանի մը համար աւելի տաղտկալի դառնալու: Չնչին բանի մը համար երախտագէտ ըլլալու սովորութիւնը արմատ կ'ենտէ մեր ներքը, և ամենապզտիկ կայծուկը հրդեհի փայլ կարծեւով, աննշան նստառութիւն մը՝ անմահ բարեբարութեանց կարող կ'արձարցնենք: Մէկ տասնըհինգերորդ փայլին խնայելով, ամէն բանի մէջ խնայելու իմաստութիւնը յիսուր գձգութեան կ'տանիք, և մէկէ աւելի անգամներ արժանապատուութիւննիս կ'փեթուենք:

Փողոցի մուրացկանութիւնը արգիլուելէ ի վեր, կան որ կ'մուրան լուսկի ծախելու պատուակի տակ, մինչեւ անգին հարուստներ թերեւ, չգիտուած ունակութեամբ մը, լուսկի կը մուրան, ներուզութեան դիմակին ու բռնի խոնարհելու հարկին տակ:

ՕՆԵՆԻ ԶԻՅԹԻՒՄՍՈՒՄ  
«Ինքզանդիւն»

### ՆՈՒՊԱՐ ՓԱՅԱՅԻ ՄԱՆԱՐԱՍԱՆԻ ԿԱՆԿԱՍԱՆ ՀԱՆԴԵՍՆ Յ՝ ԱՂԵՐՍՈՒՆԴՐԻԱ

(Մեր մասնաւոր թղթակցէն)

Կիրակի կէս օրէն առաջ, պատուազէն անմիջապէս վերջը, Ժամը 11ին Աղեքսանդրիա հայոց եկեղեցւոյ բակին մէջ տեղի ունեցաւ հանդուցեալ վեճ: Նուպար բաշայի մահարձանին բարձրացման հանդէսը:

Հանդէսին կը նախապահէր Գերապախ Թովմատի եպիսկոպոս Այվազեան, որ շրջապատուած էր եկեղեցական դասէն: Հայ և օտար մեծամեծներու բազմութիւն մը ներկայ էին յիշեալ հանդէսին: Ներկայ էին նաև հանդուցելոյ ազդակներէն զատ, վեճ. Եազուպ բաշա Արթին՝ կրթական գործոց նախարարութեան խորհրդակա Պ. Մարի Պէլէ՝ միջազգային դատարանի նախագահը, վեճ. վեճ. Մահմուտ բաշա Սըրքի, Աղեքսանդրիոյ կառավարչը, Ե. Բրի պէյ՝ թաղապետութեան ընդհանուր անօրէն. Պ. Պէլէտիքի պէյ, կառավարչութեան քարտուղարը, նոյնպէս միջազգային դատարանի գաւառորներէն վեճ. վեճ. Ռէիլեան Արթին և կարտպետ պէյերը, և Եւոսփ պէյ Շէրիբեան. Աղեքսանդրիոյ Հեղէն հասարակութեան նախագահ Պ. Սալվաիօ և այլն և այլն:

Գլխոյն աշակերտներն ու աշակերտուհիները լողըռուած էին մահարձանին շուրջը, որ պակներով զարդարուած էր:

Ն. Գերապախութիւնը կարճ, բայց ազդու բանախօսութիւն մ'ըրաւ այդ հանդէսին առթիւ:

### Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

վեճ. Եազուպ Արթին փաշա, խորհրդական կրթական նախարարի, և Մահէր փաշա՝ կուսակալ Գահրէի, անցեալ օր Առաջնորդարան Սըրբազան Առաջնորդին այցելութեան գնացին:

### ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՍՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կը խնդրուի ընկերութեան արգոյ անդամներէն որ հաճին իրենց յետնեալ կամ ընթացիկ ամսավճարներն ընել ընկերութեան հաւաքիչ Տիար Օհանէս Գաւրմաճեանի, ի փոխարէն պաշտօնական ընկալազիր պահանջելով:

Ի դիմաց Գործ. Ժողովոյ  
Լաւրան-Ընթ. ընկերութեան  
Ատենազպիր Ատենապետ  
Վ. ԱՄԱՏԻՆ Ս. ՕՏԱՊԱՇԵԱՆ

... վարչութիւն «Նոր-Օր» ի  
Ի Գաղաքիս

Ազգ. Գալստեան վարժարանի հանգուցեալ անմահ Բարեբարին հոգեհանգստեան տարեգարձին առթիւ դպրոցին աշակերտուհիք իրենց վար-

ժուհւոյն՝ Օր. Սօֆիկի կարգադրու- թեամբը ծաղկեփունջի մը գեման պատրաստութեանը սկսեալ են, յորոց Օրիորդը Ե. Ք. Պարունի առաքինու- թեան բարեմանութեանց և աւելի բարի մասն ընտրելով՝ իրենց ի բա- ժին, քան զորոշ ողջ Ազգաստանամ ընկերութեանս նուիրեցին ի յիշատակ նոյն նպատակին: Զոր յօրինակ բարի յայտարարելով մերազնեցից՝ կը փա- փագէինք որ միւս աշակերտուհիք ալ այս շաւղին առաջնորդուէին:

Այս երրորդ տարին է և յուսմալ- տըս կը ծախսուի աշակերտուհիներու այս գովելի ձեռնարկը: Ծաղկեփուն- ջը վարկեցին մը համար ի հանգէս պիտի փայլի (այն փառամոլու- թեան արդիւնք) և ահա փոշիներու կեր պիտի լինի բնականաբար, ինչ- պէս իրմէ առջինները:

Ի դիմաց Աղբատալս. ընկերութեան Թ. Քիտիճեան 10 յունվար 1901

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ըստ «Վաստերանտ» լրագրի, Ռիլ- հէլին թագուհւոյն ամուսնութիւնը տեղի պիտի ունենայ փետրուար 7ին:

— Իտալիոյ վիքթոր — Լամանուէլ թագաւորին կնոջ՝ Հելենէ թագուհւ- ան յղի ըլլալը պաշտօնական կեր- պով պիտի ազգարարուի յունվար ամսոյս մէջ:

Եթէ մանչ զաւակ ծնի, իշխան Հոսովի տիտղոսը պիտի առնէ:

Կ'ըսուի թէ Չարը կնքահայր պի- տի ըլլայ:

— Պօէրները սովորութիւն ունին որ իրենց դագաղը՝ չմեռած՝ իրենք կը պատրաստեն: Պ. Քրուկէր ալ ունի կղեր: Բայց «Լա Լիպուր Բառուր» ի Բրեզօրիայի թղթակցուհիին գրածին նայելով, Լորա Ռապրոզ, հակառակ Տիկին Քրուկէրի ըրած բողբոջներուն, զայն բռնի առնել տուած ու քրիս- թիան վիզթոռ եշխանին դիակը մէջը դնել տուեր է:

### ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹՐԱՆՍԿԱՆ

Ռուսերը երբ տեսան որ զօրք ևս գէնք չպիտի կրնան զրկել Պօէրներ- ըուն, զրամախան օգնութիւն ընելու ձեռնարկեցին: Ռուսիոյ մէջ յանձ- նախումբեր կազմուեցան ի նպաստ Պօէրներու հանգանակութիւն ընելու համար:

Անգլիական զեսպանը այդ առթիւ կոմս Լամսորֆի երթալով դիտորու- թիւն կ'ընէ և զարմանք կը յայտնէ թէ՛ ինչպէս կրնայ ըլլալ որ առանց կառավարութեան հրամանին երկրին մէջ հանգանակութիւն կը բացուի:

Ասոր վրայ, կոմս Լամսորֆ, դի- տել կուտայ թէ՛ ատիկայ ոստիկա- նութեան գործն է, ոչ թէ նախա- րարութեան: Ոստիկանութիւնն ալ ո և է արգելք չի տեսներ հակա- ռակելու այսպիսի հանգանակութեան մը: Որքան որ Բրիտանական կառա- վարութեանը պաշտօնապէս յայտա- րարեց թէ՛ Օրանսի և Թրանսպալի

նահանգները Անգլիոյ կցուած են, բայց մենք ասոր մեծ կարեւորու- թիւն չենք կրնար տալ, քանի որ Պօէրները զեռ պատերազմը կը շա- բունակեն:

ԱՐՄԱՆԱՍԻՆ ԳՍՏԵՐ. — Անգլիոյ դատարաններուն այս օրերս արձակած երկու վճիռներն ուշագրաւ են: Լանտոնի Ամուսնալուծմանց Ատենը ծովային զօրաց Տորք. մը դատա- պարտեց 4,000 անգլ. լիրա վճա- րելու ծովային զօրաց հաղարապետի մը, որուն դեռատի կինը գլխէ հանած էր, երբ իր արուեստին կիրառութեան համար կանչուած էր այն կնոջ մօտ: Այս չափազանց կնասէր Տորքորը 4,000 լիրան մինչև մէկ ամիս պիտի վճարէ հաղարապետին, որ մի և նոյն ատեն իրաւունք ստացաւ իր կինը ձգելու: և ուրիշ կնոջ հետ ամուսնանալու: Պատ- ժական դատարանն ալ 4,000 լիրայի վճիւր մը տուաւ ճէնգլմէնի մը դէմ, ոչ աղբորամնութեամբ հիւանդացած իր կնոջ քով գտնուելու համար օրիորդ մը բերել տուած էր, և յայտնելով թէ կնոջ հիւանդութիւնն անբուժելի է, և թէ անոր մահէն ևտքն իրեն հետ պիտի կարգուի, յարաբերութիւններ հաստատած էր յիշեալ աղջկան հետ, և մինչև իսկ հայր եղած էր: Որով- հետեւ կնոջ մահէն ետքը չէր ուղած ամուսնանալ, և որովհետեւ ամուսնու- թիւն խոտուցած ըլլալն անվիճելի էր, մարդը դատապարտուեցաւ 4,000 լի- րայի գահացում տալու իբրևած մօր:

— Տիրապէքի ի նահանգին մէջ, մէկ քանի թափառողիկի ցեղեր զանազան դիւղերու վրայ յարձակելով, զիւրաց- ւոց արջաւաններն ու ստացուածքներն յափշտակած էին: Տեղական իշխանու- թիւնք ոստիկան զինուորներ զրկած էին աւաղակներուն վրայ: Ուրիշ զին- ուորական շտաբ մ'ալ Սեվերէկ զըր- կուած էր ցեղապետին կողմէ վրանա- բնակ ցեղերուն յարձակումները վա- նելու, և անոնց յափշտակած արջաու- ներն եւս աւանելու համար վերջն տեղեկութեանց նայելով, ոստիկան զինուորը յաջողք եւ 406 ոչխար և 33 արջաւ ետ առնել աւաղակներուն ձեռքէն, որոցմէ 22 հոգի ալ ձերբա- կալել են: Նոյնպէս ուրիշ հինգ զիւ- ղերէ յափշտակուած հարիւրաւոր ոչ- խալներ և արջաւներ ետ առնուելով իրենց աշերտուն յանձնուեր են:

### ԺԱՆՏԱԽՏԵ ՅԻՉՄԻՐ

Իզմիրի մէջ ժանտախտին դոյութիւ- նը պաշտօնապէս հաստատուած է: Համաճարակն արդէն 20 օրէ ի վեր աւերում կ'գործէր, և բժիշկները չէին կրցած որչա՛ն անոր ընտրութիւնը: Թէև հիւանդութիւնը բուն ափական ժանտախտ չէ, այլ տեսակ մը ժանտախ- տային թոքատապ, որ նախ պարզ թոք- տապի արտանիշներով կ'երևի, բայց սպա ժանտախտի կ'փոխուի, երբ չորս օրէն մեղմանալով հիւանդը, թէև սովու- րական թոքատապն ընդհանրապէս աւելի երկար պայմանաժամ մը կու- տայ հիւանդին: Վերջին 20 օրերուն մէջ, 14 գէսքեր սրտատաած են, որոց 12ը մեռեալ: Տեղական իշխանութիւնք հարկ եղած զգուշական միջոցները ձեռք առած են: Բրօքիսէօր Ատիլ պէյ, ոչ Բատթէօրեան Հաստատու- թեան մէջ ուսած է, Պարէ Իզմիր զըր- կուած և քննութեամբ հաստատած է ժանտախտի միկրոբին գոյութիւնը:

### Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

— Տեղւոյս երկրագործական վար- ժարանի տարեկան ցուցահանգէսը պիտի սկսի հաւանականաբար ասկէ 10 օր վերջը. նախապատրաստու- թիւնները կը կատարուին արդէն:

— Յառաջիկայ շաբաթ Գահիրէ կ'սպասուին բազմաթիւ զբօսաշրջ- ջիկներ:

— Պուլաքի կողմը գտնուող բարձր հողերը Պէլճիգական ընկերութեան մը կողմէն ծախու առնուած են, ուր տուններ պիտի շինուին եւրոպական դրութեամբ և պողոտաներ պիտի բացուին:

Ա.Զ.Գ. Կը ծախուի հայաստաւ թուրքերէն ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԷԱՅ. Գիմնը թեր- թիւ լամպագրատունը:

### ԱՐԴԻ ԵՐՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս տեսնը այն յօդուածին առաջին մասին մէջ (Նոր-Օր թիւ 61) յարգելի յօդուածագիրը միակ պատ- ճառ արդի երիտասարդներուն արթ- րաբարոյութեան, զրամը, աւելի ճիշ- ղը, զրամի անյագ ծարաւը կը գտնէ իրաւամբ: Երիտասարդները զուարթ սլալու են, կ'ըսէ, առանց իրենք զիրենք զուարճութեանց տալու, և, թէպէտ Պ. Ֆրեյլիէ խօսքը ի մաս- նաւորի փրանսացի ուսանողներուն, երիտասարդներուն համար է, բայց այնպիսի նիւթ մ'ընտրած է որ, առ- հասարակ, կը շօշափէ ամեն ազգի երիտասարդութեան ու ուսանողու- թեան ներկայ վիճակը, երբ անոնք ամեն բանի մէջ զբաժնի կը ձայնեն միայն. ձայնարկութիւն մը՝ սուր, հոգեմաշ, զոր արտարբերութեան ժա- մանակ անկարելի է որ մարդու կեան- քէն չ'իլէ քիչ մը:

Հարստանալու տենչանքը չ'է որ կը մեղադրէ Պ. Հ. Ֆրեյլիէ: Երիտա- սարդը թոյլ տալու չէ որ այդ տեն- չանքը կաշկանդէ զինք, և « խաղաղ հոգւոյ ու հանդարտ մտքի առաջին նշանն կող զուարթութիւնը » խելով իրմէ, արեւբարոյութեան մէջ ձգէ:

Արդի երիտասարդութեան հեղինա- կը կը շարունակէ:

« Հարստանալու այս բունն եռանդը, կ'ըսէ նա, բոլորովին գէշ բան մը չէ անշուշտ: Մարգս աշխատութեան կը մղէ. միտքն ու կամքը կը զօրացնէ անոր: Բայց այդ եռանդը անհաշտ է հոգւոյ հանգըս- տութեան ու զուարթարոյութեան հետ, որովհետեւ զրամէն կը ծնի: Եր- բեմնի երիտասարդներուն — խօսքս խելացիներուն համար է բնականա- բար — սա յատկութիւնը լաւ էր. — Կիտանքը առաքելութիւն մը կը նկու- տէին: Այսօր՝ պայքար մը նկատուել է զայն, ու խորհիլ թէ կեանքը պայ- քար մ'է, պէտք է անդուլ, զժնդակ կու մղել, պէտք է փութալ, բանէ մը՝ ս'չ զիտութենէ, ո'չ սիրոյ, ո'չ բանաստեղծութենէ՝ ետ չ'մնալ, սուս- ջանալ, կոխել անցնիլ ամեն դժուար- ութիւններ որպէս զի... յաջողիք, իրօք ստակալի բան է այս: Արդի ե- րիտասարդութիւնը զիտէ թէ պատ- րանքի շրջանիկ հուրերը՝ փարսներ չ'են: Անոնց ճամբան չ'բռնել, ու չի- տակ յաջողութեան դէմ կ'երթայ: Կ'արհամարհէ ինչ որ անօգուտ է. ցնորքի ուրախութիւնները չ'ճանչնար: «Մի քիչ ուշադիր փիլիսոփայները ազգին ապագան կորստի մատնուած կը համարին: Բայ իս, ներկան տխուր է արդէն: Ինչ ինչու կրնան ունենալ այն երիտասարդները, որ ծիրանն աւելի, իրենց երազներուն անմիջա- կան իրականացումը կը բազման: Գրիտանեական հաւատքը պահպանէ զիրենք որ իրենց եղբայրներուն հոգեկան վիճակն հաս- կընան և հետեւաբար, այդ է իրենց միակ զուարթութիւնը: Գրիտանեա- կան հաւատքը չ'եղած, յոյսներնս գիտութեան վրայ գրած էինք: Կը կարծէինք թէ գիտութիւնը պի- տի գոհացնէր մարդս, և անոր ըրած զիտերը տեսականապէս՝ կեանքի, իրաց և գերագոյն օրէնքի զազանիք- ները պիտի ըսէին մեզ, և, թէ զործնականապէս՝ պիտի ջնջէին մարդ- կային թշուառութիւնները: Երկնային յոյսերուն երջանկութիւնը մէկ կողմ՝ թողուցինք, կարծելով որ երկրային երջանկութիւն պիտի ունենանք: «Այս երկու տեսակէտով, գիտու- թեան սեսակութիւնը անվիճելի է: Ինձմէ աւելի հեղինակաւորները ըն- դունած են ասիկա: Կեանքի հանե- լուկը լուծած չէ նա: Գե-եր, անձա- նօթներ ձգած է նա մեր առջև, որ աւելի քան երբէք կը խոսվեն մար- դուն հոգին, և մարդը յաւիտենական ինդրոյն լուծումը գտնելու ատեն, շուր բացասութիւններով գոհանալու տեղ, ամենագէշ յիմարութիւններու մէջ կ'իյնայ: Գալով մարդոց թշուառու- թեան որ բսան տարեկանէն կ'սկսի, ի փառս իրենց, գիտութիւնը չէ կըր- ցած զարմանք գտնել:»

Ասով, ստակայն, յարգելի յօդուա- ծագիրը առանց բրիտանեական ո' և է խնդր յուղելու, կ'ակնարկէ պար- զապէս այն երիտասարդները, որոնք ինքզինքնին դիտուն, զարգացեալ, կամ ինչպէս կ'ըսեն ուսաստանքը, ինքզինքնին կարծելով կրօնք, հա- ւատք (սխալ չ'հասկցուինք) ծալած մէկ կողմ... Գառթիէ Լաթիֆներու անկիւնները թաղած են, որպէս զի օրին մէկը, «չատ արտաւալու կամ ծաղրուելու» վիճակին չ'հասած... ձեռք առնեն: Պ. Ֆրեյլիէ այսպէս կը վերջացնէ իր տեսութիւնը:

«Արդի երիտասարդները, կը յարէ նա, յուսալէն, հաւատալէն, ուղեղէն զատ բան չ'են գիտեր: «Ժամանակին, ըզմանոյններու ա- ւանդալէպերու մէջ եղած պատերուն պէս պատ մը կրնային ունենալ ա- նոնք իրենց առջև, որուն ետեւը

բարձրացած կ'ըլլար վայելից պա-  
լատը: Այդ պատը խորտակուած է  
հիմա, բայց անապատ մ'է տեսած-  
նիս: Ամենէն խելօքներն անգամ կ'ու-  
զեն ընդմիջել զայն, առանց զիանա-  
լու թէ հոն ովասիս մը կ'այ գոնէ,  
անօթի ծարաւ չ'մոռնելու համար:

Այդ բանէն է ահա, որ առաջ կու-  
զայ մեր զաւակաց արդի անկշտու-  
թիւնը: Ինչպէս կ'ուզէք ուրեմն որ  
զուարթաբարոյ ըլլան ու լաւ ապա-  
զայ մ'ունենան այժմու երիտասարդ-  
ները:

Եւ միթէ մեր եսիտասարգութեան  
քաշած նեղութիւններուն, կրած զըր-  
կանքին պատասխանատուն՝ հայրերը  
եղած չ'են միշտ:

**ԹԻՖԼԻՉԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՍԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ**

«Նոր Գար» կը ծանուցանէ թէ՛  
դեկտեմբեր 10ին Թիֆլիզի քաղաքա-  
յին խորհրդարանին մէջ տեղի ունե-  
ցած է Թիֆլիզի հայոց Հրատարակ-  
չական ընկերութեան ընդհանուր ժո-  
ղովը: Իր փակմանը առթիւ գոյքե-  
րուն ժառանգ մը նշանակելու համար:  
Քսան և հինգ անդամաց ներկայու-  
թեան, նախագահը առեանը բացաւ  
ու հաղորդեց Ռուսական կառավա-  
րութեան հրամանը, և ըստ որ ընդ-  
հանուր ժողովոյ պարագման նիւթն  
է՛ ընկերութեան 38րդ յօդուածի հի-  
ման վրայ ընկերութեան գոյքերուն  
ժառանգ նշանակել հոգեոր դպրոցնե-  
րէն մին: Կարգաց Երևանի թեմական  
դպրոցի հոգաբարձութեան նամակը  
որ կը խնդրէ գոյքերը յիշեալ զըպ-  
րոցին յանձնել: Ապա տեղեկացուց,  
թէ ընկերութիւնը 100,000 հատորէ  
աւելի գիրք, իրենց իսկական գիներով  
մօտ 43,000 ռուբլի արժողութեամբ:  
Ա. Պողոսեանի նուիրած 10,000 ռուբ-  
լիէն երեք հազարը ծախսուած է,  
բայց նուիրատուի հետ ունեցած պայ-  
մանի հիման վրայ ընկերութիւնը  
փակուելու դէպքին մէջ այդ ամբողջ  
գումարը վերագարձուելու է նորա  
գրամով և զրքերով:

Ընդհանուր ժողովը ձայներու մե-  
ծամասնութեամբ վճռեց:

1. Երևանի թեմական դպրոցը իբ-  
րե ժառանգ որոշուի Հրատարակչա-  
կան ընկերութեան գոյքերուն:

2. Նախկին վարչութեան իբրև օ-  
ժանդակ և մասամբ վերահսկիչ մար-  
մին մը նշանակուի հինգ հոգիէ բաղ-  
կացեալ իբր լիբիտատիւնի յանձնա-  
ժողով:

3. Ա. Պողոսեանի նուէրին գործը  
վերջացնելու համար լիազօր իշխա-  
նութիւն արուի նախկին վարչութեան  
և լիբիտատիւնի յանձնաժողովին:

Այս երկու մարմիններն պէտք է  
որ աւարտեն իրենց պաշտօնը մինչև  
ապրիլի 1, և արուած որոշումները  
պիտի հաղորդուին կառավարութեան:

Ի վերջոյ ընդհանուր ժողովը յո-  
տընկայս շնորհակալութեան քուէ  
տուաւ ընկերութեան հիմնադիրներուն  
և անձնուէր գործիչներուն:

**Ա. Զ. Դ**

Շատերու կողմէ յայտնուած փա-  
վաքի մը գոհացում տալու և մեր  
ընթերցողներու գիւրութիւն մը ըն-  
ծայելու նպատակով, այսուհետև մեր  
թերթը հատով պիտի ծախուի Շա-  
րա Ապու-էլ-Ապիզի սկիզբը Պ. ԿԱՐԱ-  
ՊԵՏ ԵՐԶՆԿԱՅՆԱՆԻ խանութը ինչպէս  
նաև Գլխի-Պէյ փողոցի ծայրը և թը-  
րամիջեցներու կայարանին մօտ ծխա-  
վաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍՍՊԵՆԻ  
քով:

**Ա. Զ. Դ**

Կը ծախուի Տ. Կ. Երզնկացեանի խա-  
նութը ի Շարա Ապու-էլ-Ապիզ:

**ՕՐԱՑՈՅՑ  
ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ  
1901 ՏԱՐԻՈՑ**

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
Ս. ՓՐԿՉԻ Ա.Զ.Դ. ՀԻՒՆԵՂԱՆՈՑԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ  
ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ  
ԳԱՏԿԵՐԱԶՄԻ**

Շրջակայ գիւղերէն եկած յանձնա-  
բարութիւնը փութով կը կատարուին  
Դիմել վերայիշեալ հասցէին:

Le Gérant J. MUNIER

Տպաւ. «Միութիւն».— Թ. Ս. Փափագեանի

**ՊԱՆԳ ԼԻՍՆԷԶ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ  
Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Ղիոնի հանրածանօթ գրամատունը,  
այս անգամ ունեցաւ իւր Եղիպտոսի  
գործակալնալ, Տ. Մկրտիչ Սոսոյեան,  
որ իւր հրապարակային ցոյց տուած  
պարկեշտ գործունէութեամբն ամե-  
նուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ.  
թիւ իրեն յանձնուած և Ղիոնի բազա-  
քապետութիւնէն պաշտօնապէս վա-  
ւերացուած փոխանորդարդի համա-  
ձայն, պիտի կատարէ Պանգ Ղիոնէզի  
միջոցաւ ամեն տեսակ գրամական և  
ֆուէտի ֆոնսիյէի, վիլ սը Բարիի և  
Գաղղիական ամէն արժեթուղիներու  
գործողութիւններ, գանձումներ Ս. մա-  
կան չնչին գումարի մը խնայողու-  
թեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն,  
պոհհասի բաժնեթուղի մը, վիճակա-  
հանութեամբ երաշխաւարուած:

Փափաքողները հաճին գիմել Նիւ-  
պառի վրայ փաստաբան Ռարթաքի  
գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ զըր-  
կել հետեւեալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ  
Ի ԳԱՀԻՐԷ

**ԱՏԱՆԱՐՈՅԺ  
Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ**

Վերջերս հաստատուած ի Գահիրէ,  
Գահիէ սը լա Պուրսի կից, Բ. յարկ,  
թիւ 9 գասիկոնը:

Կը բժշկէ բերնի և ակուայի ամեն  
տեսակ հիւանդութիւնները: Աղքատ-  
ները ձրի կը գործունէ ամեն օր, ա-  
ռաւօտեան ժամը 8էն 9:

**ՊԵՍԵՆԱՆ-ՅԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.**

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ  
ՄԱՐՏ ԵՒ ՏԻՎԻՍՏ

ԵՒ ՁԵՒԱԴԻՏՈՒԹԵԱՆ ԳՊՐՈՑ  
Ապիսի մեծ պողոտային վրայ Տայիւայի  
Սանիթի դիմացը, Եսիսիին ելիքապան  
գործիքն ու վան առասուկը:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած  
հաստատուած ըլլալով կը յայտարա-  
րենք արդոյ հաստարակութեան ինչ  
պատրաստ ենք գոհացնել մեզ գիմել  
Պատ. յաճախողները, գործի մաք-  
րութեան, զիններու չափաւորութեան  
և ճշգրտահասութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'ուան-  
գուին նաև ձեւապատութեան դասեր  
ամերիկեան ամենալիւրջին կատարե-  
լագործուած մթնոսով:

Մանրամասնութեանց համար գիմել  
մեր գործատեղին:

**ՃԱՇԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ**

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱՉՈՆՃԵԱՆ  
Շարա Ապու-Սապան  
Նիւս-ՏՅիվիսի դեղատոմսի դիմացը:

Օգտաւն ու զուարճալի գիրք մնա-  
քուր ու վայելուչ սպաս. համեղ ու  
աննդարար կերակուրներու գանազա-  
նութիւնն, անխորդախ պատրաստու-  
թիւն. ճոխ ճաշացուցակ մը գիւրա-  
մասչիլի գիներով. ահա՛ Գաչոնճե-  
ան եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ  
անգամ թող գիմէ, վստահ պէտք է  
ըլլայ թէ մշտակայ յաճախողը պիտի  
գառնայ հայկական ճաշարանին:

**Տ Պ Ա Ր Ա Ն**  
**Ի ԳԱՀԻՐԷ**  
ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ  
**ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ**  
**ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ**  
Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատա-  
րակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազգեր,  
հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակազուրկներ, պահարաններ, հաշուեցուցակներ եւն:  
Յանձնարարութիւններ կը կատարուին փոքրով, ամենայն խնամօք և մաշակաւոր սպագրութեամբ:  
**ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ**